ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

14/12/2023 թվական **Արթիկ համայնք, գ. Տուֆաշեն**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Արմանա հոլդինգ» ՍՊԸ-ի Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների երկրորդ փուլի

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 15:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն գյուղի վարչական ղեկավարի նստավայրում:

Ներկա էին՝ Արթիկ համայնքի կողմից լիազորված անձ՝ Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և SS ոլորտի բաժնի պետ՝ Արկադի Թադևոսյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Համլետ Սուջյանը, Տուֆաշեն գյուղի վարչական ղեկավար Արտակ Եգորյանը, <<ԱՐՄԱՆԱ ՀՈԼԴԻՆԳ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Նարեկ Կիրակոսյանը, Յուրա Կիրակոսյանը, ընկերության փորձագետ Գուրգեն Հակոբյանը, ՇՄԱԳՓԿ ՊՈԱԿ-ի փորձագետ Գոհար Մինասյանը, Տուֆաշեն գյուղի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ Արկադի Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանրային քննարկման նպատակը. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով համաձայն՝ 2023թ. դեկտեմբերի 14-ին՝ ժամը 15:00-ին, Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվում է «Արմանա հոլդինգ» ՍՊԸ-ի Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկման 2-րդ փուլը:

Հանրային քննարկման իրազեկումն իրականացվել է օրենքով սահմանված կարգով, հայտարարությունը տեղադրված է եղել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության

պաշտոնական կայքում (www.env.am), Արթիկի համայնքապետարանի artik.am կայքում, Արթիկի համայնքապետարանի, սոցիալական կայքում, <<Ազդարար>> օրաթերթում:

Հանրային քննարկմանը ներկա են ձեռնարկող կողմը՝ ՇՄԱԳ փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի փորձագետը, ում էլ փոխանցվեց խոսքը:

Ելույթ ունեցան

1. ՇՄԱԳՓԿ ՊՈԱԿ-ի փորձագետ Գոհար Մինասյանը, ով ներկայացրեց, որ <<Արմանա հոլդինգ>> ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեությունը <<Ա>> կատեգորիայի գործունեություն է, և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության, այդ գործընթացը կարգավորվում է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի համաձայն: Այս հանրային քննարկումները կազմակերպվել են սույն օրենքի /21.06.2014թ. ՀՕ_110_Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325_Ն որոշման հավելվածի համաձայն: Սա երկրորդ հանրային լսումներն են: Մինչ հանրային 2-րդ լսումները, օրենքով նախատեսված բոլոր գործողություններն ու միջոցառումներն իրականացվել են ՇՄԱԳ փորձաքննության կենտրոնի կողմից: Նա ներկաներից խնդրեց հարցերի, առաջարկությունների, դիտողությունների դեպքում բարձրացնել դրանք կամ 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՇՄԱԳ փորձաքննական կենտրոն: Նա զեկուցեց, որ հայցվող տարածքը Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասում է գտնվում՝ 08-111-0016-0108 (3 հա), 08-111-0107-0010 (3 հա), 08-111-0019-0186 (2,5 հա) կադաստրային ծածկագրով ենթավարձակալված տարածքներ են: Փորձագետ Գ. Մինասյանը ներկայացրեց, որ բոլոր գերատեսչություններին ուղարկվել է հայտը, բոլոր կարծիքները հաշվի են առնվել: Հայցվող տարածքը չի գտնվում հատուկ պահպանվող տարածքների գոտում, բնության հուշարձաններ, պատմության հուշարձաններ տարածքում չկան, <<Կարմիր գրքում>> գրանցված բույսեր ու կենդանիներ չկան: Աշխատանքից հետո իրականացվելու են ռեկուլտիվացիոն աշխատանքներ, նա ներկայացրեց ռեկուլտիվացիայի համար պահանջվող գումարի չափը: Գործունեության ընթացքում լինելու են ազդեցություններ շրջակա միջավայրի վրա, իրականացվելու են մշտադիտարկումներ, կատարվելու են մթնոլորտային օդի դիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ, հողային ծածկույթի՝ ամսական մեկ անգամ, վայրի բնության, կենսամիջավայրի դիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ: Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է ռեկուլտիվացիա:

Նա ներկայացրեց, որ հայցվող որոշակի տարածքներ համընկնում են այլ քաղաքացիների սեփականության հետ, այստեղ առկա են նաև այլ

նպատակային նշանակության հողեր: Փորձագետը խնդրեց պարզաբանումներ հնչեցնել այս կապակցությամբ:

Նիստը վարող Ա. Թադևոսյանն ասաց, որ այդ հողերը համայնքի բնակիչների հողերն են, և ենթավարձակալական հիմունքներով օրենքով սահմանված կարգով տրվել են ընկերությանը: Ընկերությունը, ստանալով լիցենզիա, լեռհատկացում, ամեն դեպքում պարտավոր է փոխել այս հողերի նպատակային նշանակությունը: Համայնքն առարկություններ չունի, թեպետ նախկինում ընկերությունը երեք անգամ մերժում է ստացել համայնքից, այս հանրային քննարկումների ընթացքում, համայնքն առարկություն չունի ընկերությանը:

2. Բնապահպանության փորձագետը Գ. Մինասյանը հարցրեց՝ որքան է հանքավայրի հեռավորությունը բնակավայրերից
Ընկերության փորձագետ Գ. Հակոբյանը պատասխանեց՝ 300 մետրից ավել:

3. Բնապահպանության փորձագետը Գ. Մինասյանը ասաց, որ մի կտոր հատված կա, որը բնակելի հատվածից բավական մոտ հեռավորություն ունի:

Ընկերության փորձագետ Գ. Հակոբյանն ասաց՝ որ դրանք կվերանայվեն, թեպետ նախնական իր ունեցած կոորդինատներով բնակավայրերի բնակելի հատվածից պիտի բավականաչափ հեռավորություն ունենար հայցվող տարածքները, սակայն եթե կան այդպիսի հատվածներ, որոնք ավելի մոտ կգտնվեն բնակելի տարածքներից, հայցվող տարածքների կոորդինատները կլրամշակվեն:
<<Արմանա Հոլդինգ>> ընկերության ներկայացուցիչ Յու. Կիրակոսյանն ասաց, որ իրենց ընկերությունը տարիներ առաջ մոտ 12 տարի հանքարդյունահանում է իրականացրել հենց այդ տարածքներում, սակայն հետո ընկերության լիցենզիան ավարտվել է, ինքն էլ ունեցել է առողջական խնդիրներ և չկարողացել ձեռնարկել նոր լիցենզիայի գործընթացները: Հանքը բացիանք է, նոր հանքավայր չէ:

Նիստը վարողը խնդրեց մասնակիցներից իրենց հուզող բոլոր հարցերը բարձրաձայնել և քննարկել:

Հարցեր հնչեցին

1. Տուֆաշեն գյուղի բնակիչներից մեկն ասաց, որ մինչ համայնքների խոշորացումը ընկերությունը երեք անգամ մերժվել է, և չի ստացել հանրության դրական կարծիքը, բանն այն է, որ այդ կողմերում գոյություն ունեն արոտավայրեր: Եթե այդ

արոտավայրերը դառնան հանքավայր, ապա գյուղատնտեսությունը զգալի վնասներ կկրի: Նա նաև մտավախություն ունեցավ, որ հանքավայրերից եկող ձայները, մեքենաների աշխատանքի ընթացքում արձակած ձայները, փոշին կարող են վնասել բնակչության առողջությանը: Քամին էլ կարող է բերել ավազը դեպի համայնք: Իսկ ինչ է լինելու, եթե ընկերությունը ռեկուլտիվացիա չանի:

Ընկերության փորձագետն ասաց, որ ջրի որակը ստուգում են համապատասխան ընկերությունները, իսկ այդ ազդեցությունները, որոնք կարող են վնասել բնակչությանը, այդքան էլ մեծ չեն և բնակավայրից գտնվում է բավական հեռավորության վրա: Ինչ վերաբերում է ռեկուլտիվացիային, ապա ընկերությունն ամեն ամիս մուծում է դրամագլխին, եթե ընկերությունն անգամ անբարեխիղճ գտնվի ռեկուլտիվացիայի կազմակերպմանը, ապա Կառավարությանն ընկերության մուծած գումարներով կկազմակերպի ռեկուլտիվացիան:

2. Համայնքի բնակիչներից մտահոգություն հայտնեցին, որ իրենց չեն վերցնի հանքում աշխատանքի: Իրենք ուզում են, որ շահագործվի միայն նախկինում շահագործված տարածքները, իսկ այն հատվածները, որոնք մոտ են բնակելի հատվածներին կամ արոտավայր են ծառայում գյուղատնտեսությամբ զբաղվողների համար, թող դուրս գան հայցվող տարածքից: Այլապես բնակիչները դեմ չեն, առարկելու ոչինչ չունեն:

3. Եվս մեկ հարց հնչեցրեց նույն բնակիչը՝ ասելով, որ հանրային քննարկման առաջին փուլին գյուղից շատ քիչ բնակիչ է մասնակից եղել:

Նիստը վարող Ա. Թադևոսյանն ասաց, որ հանրային քննարկումների իրազեկումը կազմակերպվել է պատշաճ ձևով, հանրությունն իրազեկ է եղել: Այլ բան է, որ կոնկրետ հարցը բարձրացնող բնակիչը, որպես գյուղի բնակիչ, չի մասնակցել: Եթե 5 տուֆաշենցի ներկա են եղել, ապա կարող էր նաև ինքն էլ ներկա լինել և արտահայտել իր կարծիքը: Եթե 5-ը ներկա են եղել, ուրեմն իրազեկում եղել է: Այլ հարց է, որ հարցը բարձրացնողին հարմար չի եղել մասնակցել հանրային քննարկումների 1-ին փուլին:

Ընկերության փորձագետ Գ. Հակոբյանն ասաց, որ նախարարությունը լիցենզիան տալու գործընթացում ուշադրություն է դարձնում բոլոր այն ազդեցությունների վրա, որը առաջանում է հանքի շահագործման ընթացքում. նախագծում ներառում է բոլոր այն միջոցառումները, որոնք կունենան մեղմացուցիչ ազդեցություն, ամենաարդյունավետ միջոցառումներից է ջրցանումը՝ օրը 2-3 անգամ:

4. Բնապահպանության փորձագետ Գ. Մինասյանը հարցրեց, թե էլ ինչ մտավախություններ ունեն համայքի բնակիչները:

Համայնքի բնակիչներից մեկը պատասխանեց, որ ըստ իրենց, հանքարդյունահանման ընթացքում երբեք հանքարդյունահանողն իրեն հատկացրած տարածքի մեջ չի

տեղավորվում, և դուրս է գալիս իր սահմաններից, մասնավորապես շինարարական թափոնները լցնում է իր սահմաններից դուրս և աղտոտում արոտավայրերը: Նա նաև պատուհանից ցույց տվեց Սովետական Միության տարիների հանքարդյունահանությունից մնացած թափոնները:

Նիստը վարող Ա. Թադևոսյանն ասաց, որ նախկին վատ փորձը չպիտի պատճառ հանդիսանա, որ հանքարդյունահանությունը կանգնեցվի:

5. Համայնքի բնակիչը նաև մտահոգություն հայտնեց, որ հանքարդյունահանությունից հետո մեծ փոսեր ու անդունդներ են առաջանում հանքի տարածքներում, ինչը կարելի է տեսնել Տուֆաշեն գյուղի այլ շահագործված հանքավայրերում:

<<Արմանա հոլդինգ>> ընկերության փորձագետ Գ. Հակոբյանն ասաց, որ այդ հատվածներում ընդերքը լիովին սպառված չէ, դրա համար էլ հավանաբար մնացել են այդպիսի խորություններ: Իսկ <<Արմանա հոլդինգ>> ընկերությունը պատրաստվում է ընդերքի օգտագործումից հետո ռեկուլտիվացնել այդ տարածքները: Բնակիչները մտավախություններ այս ընկերության հետ կարող են չունենալ: Եթե տնտեսվարողը պետությանը մի տարվա ընթացքում ռեկուլտիվացիայի գումարը չի մուծում, պետությունը զրկում է տնտեսվարողին լիցենզիայից: Հիմա այս տեսակետից պետությունը խիստ է տնտեսվարողների նկատմամբ, իսկ օրենքը գնալով խստանում է ընդերքօգտագործողների հանդեպ:

6. Բնակիչներից մեկն առաջարկեց գնալ և տեսնել լքված քարհանքերի տարածքները:

Փորձագետ Գ. Հակոբյանը պատասխանեց, որ այդ հարցը հանրային այս քննարկումների շրջանակներում չէ, ինչպես նաև շատ այլ հարցեր, որոնք հանրային քննարկման այս փուլի հայտին չէին վերաբերում: Այս հարցով այլ մարմինների պիտի դիմեն համայնքի բնակիչները:

7. Համայնքի բնակիչներից մյուսն առաջարկեց ռեկուլտիվացիայի գումարները մուծել ոչ թե պետությանը, այլ վարչական ղեկավարին, քանի որ նա ավելի սրտացավ է գյուղի հոգսերին և խնդիրներին, ավելի հետևողական:

Նիստը վարող Ա. Թադևոսյանն առաջարկեց ամփոփել հանրային քննարկումների 2րդ փուլը և ներկաներին տալ իրենց դիրքորոշումը հայտի վերաբերյալ:

Համայնքի բնակիչներից մեկն ասաց, որ ինքը, որպես տուֆաշենցի, միշտ դեմ է եղել հանքարդյունահանմանը, սակայն հիմա նա կողմ է, որ նախկինում բացված, բայց ոչ լիրվ սպառված պաշարներով հանքավայրերը շահագործվեն և ռեկուլտիվացվեն: Եթե շահագործման ընթացքում գյուղի բնակիչների համար էլ պիտի աշխատատեղեր բացվեն, ապա ինքը դեմ չէ: Նա նաև չի ուզում, որ հանքի շահագործումից փոսեր առաջանան, դա վտանգավոր է գյուղի երեխաների համար:

Ընկերության ներկայացուցիչ Յու Կիրակոսյանն ասաց, որ իր շահագործումից հետո, թեպետ հանքի պաշարները սպառված չեն եղել, այնուամենայնիվ, ինքը, որպես գյուղի բնակիչ և սրտացավ գյուղին, փակել է այդ փոսերը, որ իր շահագործած տարածքներում այդ խնդիրները չլինեն:

Համայնքի բնակիչներից մեկը կարծիք արտահայտեց, որ Տուֆաշեն գյուղը կիսատ շահագործած հանքավայրերից օգուտ չունի, թող շահագործվեն այդ հայցվող արածքները՝ հետագայում ռեկուլտիվացվելու պայմանով կամ գրավոր պարտավորագրով, նրանք ուզում են, որտարածքները ծառայեն ժողովրդին:

Նիստը վարող Ա. Թադևոսյանն ասաց, որ բոլոր գերատեսչություններն աշխատում են բացառապես համայնքի բնակչության շահերից ելներով: Ոչ մի մարմին՝ պետական, թե՝ տեղական, չի թույլ տալու, որ համայնքի բնակիչների շահերը ոտնահարվեն: Այս հանրային քննարկման տեսաձայնագրությունն ու արձանագրությունը կուղարկվի լիազոր մարմին, որտեղ էլ հաշվի կառնվեն բոլորի առաջարկությունները, մտավախությունները:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, նիստը վարող Ա. Թադևոսյանը հանրային քննարկումները համարեց կայացած և փակեց նիստը:

Հանրային քննարկումն ավարտվեց 15:46-ին:

Հանրային քննարկումը վարեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝
Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի
քարտուղարության, անձնակազմի կառավարման և
SS բաժնի պետ _____ Ա. Թադևոսյան

Արձանագրեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի օգնական _____ Տ. Չարչյան

<<ԱՐՄԱՆԱ ՀՈԼԴԻՆԳ>> ՍՊԸ-ի տնօրեն _____ Ն. Կիրակոսյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումների մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

ՑՈՒՑԱԿ

«Արմանա հոլդինգ» ՍՊԸ-ի Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավային տեղամասի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկման 2-րդ փուլի մասնակիցների

գյուղ Տուֆաշեն

14.14.2023 թ. ժամը 15:00-ին

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	[illegible]	093 014046	[illegible]	[signature]
2	[illegible]	077711175	[illegible]	[signature]
3	[illegible]	033557077	«ԱՐՄԱՆԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ տնօրեն	[signature]
4	[illegible]	077510968	[illegible] բնակիչ	[signature]
5	[illegible]	084010666	համայնքի բնակիչ	[signature]
6	[illegible]	094 84 00 57	համայնքի բնակիչ	[signature]
7	[illegible]	098679203	[illegible]	[signature]
8	[illegible]	094650142	համայնքի բնակիչ	[signature]
9	[illegible]	098958980	բնակիչ	[signature]
10	[illegible]	093-21-54-71	[illegible]	[signature]
11	[illegible]	094-94-34-99	բնակիչ	[signature]
12				

29				
30	[illegible]	098682103	[illegible]	
31	[illegible]	041556605	[illegible]	
32	[illegible]	093469984	[illegible]	
33	[illegible]	77390739	[illegible]	
34	[illegible]	93367613	[illegible]	
35	[illegible]	094-83-2403	[illegible]	
36	[illegible]	093252228	[illegible]	
37	[illegible]	098107197	[illegible]	
38				
39				
40				
41				
42				
43				
44				
45				